


ՊԱՅՄԱՆՔ

Յարեան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մէճ.
Գաւառաց 2 Լիրա
Վեցամս. Կ. Պոլսոյ 3 Մէճ.
Գաւառաց 1 Լիրա
Օտար երկիրներու 50 ֆր.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆՈՒՄԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գաւառի գինացման լրագրաց համար
ծախքը խմբագրութեան վրայ է :
Լրագրաց փութերէն ալ նոյնն
կամ որ և իցէ գրութիւն խմբագր-
— ճեղքելն ախար ուղղութիւն : Գաւառ-
միս լրագրագրար ճառագործի իւր
198, Նոյն խմբ. Մասիսի գրաւան
եակը :
Ճանաչու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չապուած նամակ, յօդուած, ևն
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3 ԴԵԿՏԵՄԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անդդիական ազդեցութեան և
չահուց վրայ զորոյնները նուազեցան :
Բրիտանական դիւանագիտութիւնը
Պէթըր փաշային մասնաւոր պաշ-
տօնով մը փոքր — Ասիա զրկուելուն
համար բաւական աշխատելէ ետեւ,
կարծես իւր յաջողութեանց ծայրն
հասնելով, փաստած դափնիններուն
վրայ կը հանգչի : Ինչէն արդեօք
Պէթըր փաշային պաշտօնն և իրեն
տրուած նոր հրահանգներն, ասոնք
տակաւին արտաքին հասարակու-
թեան անձանցին և իւրաքանչիւր
լրագրաց թղթակիցները ծանուցին
սակայն թէ Սըր Լէյարտ բաւական
գիտականութիւն կրած էր Պէթըր
փաշային ֆէրմանն ստանալու համար,
որոյ տրամադրութիւնները չհրատա-
րակեցան : Անդդիական թերթեր այս-
չափ միայն կը յայտարարեն թէ Պէթ-
ըր փաշա փոքր — Ասիոյ ընդհանուր
բարենորոգման պերաստեալ պիտի
լինի և Այս յաջողութեան երեւոյթը
կրնայ նպաստել լրտ Պիքընսֆիլտի
և լրտ Սալիսպրիի պարզերես եւ-
նեւ խորհրդարանին առջև, և պար-
ծիլ թէ Մալթայի նաւատորմին ըս-
պառնալեաց ներքեւ փոքր — Ասիա բա-
րեկարգեցաւ Պէթըր փաշայի շնոր-
հիւ : Նախարարութիւնը քանի մը
ճառ կրնայ խօսիլ Բրիտանական ազ-
դեցութեան վրայ, բայց իրեն իրենց
ընթացքէն չեն շեղիր : Մայրաքա-
ղաքիս Անդդիական թերթն յօդուած
մը կը հրատարակէ Անդդիական շա-
հուց (ոչ թէ քաղաքական այլ առեւ-
տրական և նիւթական շահուց) Անդ-
դիոյ դեսպանաց կողմէ գտած պաշտ-
պանութեան վրայ, և կը գանգատի
թէ Անդդիայի հպատակաց շահերն
այնչափ ազդու չեն իրաւին չեն պաշտ-
պանուիր Անդդիոյ դեսպաններէն, որ-
չափ կը պաշտպանուին ուրիշ հպա-
տակաց շահերն իրենց դեսպանա-
տանց միջոցաւ :

Անդդիացի հպատակաց գործերն
ու պահանջները տարիներով առեւտր-
կը մնան, մինչդեռ ուրիշ հպատակ-
ներ, մանաւանդ Գաղղիացիք, միշտ
ազդու պաշտպանութիւն կը գտնեն
իրենց առեւտրական շահուց : Տեսա-
կանաբար, Անդդիոյ կառավարութիւ-
նը և դեսպանատունն իրենց հըպա-
տակաց շահերուն անտարբեր չեն,
այսու ամենայնիւ, Անդդիացի մը,
որպէս որ արդէն իւր պահանջն, ըստ
վերոյիշեալ թերթին, չկրնար իւր
նպատակին հասնիլ :

Մօնիթէօր տիւ Բօմբէր կը հե-
տեցնէ թէ Անդդիոյ դիւանագիտա-
կան կազմակերպութեան մէջ թերու-

թիւն մը կայ : Անդդիական դեսպան-
ութիւնները կը պաշտպանէ հըպատա-
կաց գործերը, մինչդեռ ուրիշ Անդ-
դիական դեսպան միւր պաշտօնը մի-
միայն քաղաքական կարծեւրով առեւ-
տրական շահուց կարեւորութիւն չը-
տար, մանաւանդ որ ասոնց պատ-
ճառաւ կառավարութեան և անոր
պաշտօնատարաց հետ եղած չփոխ-
անհամայն է, և դեսպանական յարա-
բերութիւններն ուրիշ կարելի է
լաւ պահելու հօդ կը տանի : Արդ-
եօք այս տողերը Սըր Լէյարտի գէ-
տնախնդրութիւնն միւրն է, և Անդդիա-
ցի հպատակաց զգացումը կը յայտ-
նեն դեսպանին վրայ — այս հաւա-
նական կրնայ լինիլ : և եթէ ստու-
գիւ այնպէս է, դեսպանին ազդե-
ցութեան չափը կրնայ հասնելու
Անդդիոյ հպատակաց քով :

Մօնիթէօր տիւ Բօմբէր Գաղղիոյ
դեսպանատան դիւանագիտական
ազդու և գործնական կը համարի և
կը յանձնարարէ նաև Անդդիացուց
համար : Գաղղիոյ դեսպանատունը
հպատակաց կողմէ ներկայացած գոր-
ծերն հիւպատարանին կը յանձնէ,
որ երբ գտնուի օրինաւոր և իրաւա-
ցի գտնէ, դեսպանին կը ներկայա-
ցնէ, և դեսպանն ալ պարտական է
գտնուի պաշտպանել : Իսկ Անդդիա-
ցիք կրնան ուղղակի դեսպանին դի-
մել, որ երբեմն շատ ազդու ծանու-
ցագրեր կը զրկէ Բ. Դոմէ, բայց ա-
նոնց ամենեւեմով պատասխան չտը-
ուիր, կամ բնաւ ազդեցութիւն չեն
ունենար : Այս դիւանագիտական
քըն եղած է որ Անդդիացի հըպա-
տակարն ոչ միայն Բ. Դոմէն, այլ և
դեսպանատունէն դժգոհ են : Վեր-
ջապէս Անդդիոյ դեսպանական կազ-
մակերպութիւնը խիստ թերի է ըստ
Մօնիթէօր տիւ Բօմբէրի, և այս
պատճառաւ Անդդիացի հպատակներ
կը վճատին եղբի իրենց շահուց պաշտ-
պանութեան մասին :

Արդեօք այս դիւանագիտութիւնը
միանգամայն վճատեցուցիչ չէ՞ն ա-
մեն անոնց, որք մնջ զիոյ պաշտպա-
նութեան շնորհիւ փոքր — Ասիոյ վե-
րակենդանութեան կրնային հաւա-
տալ : Կը մնան լրտ Պիքընսֆիլտի
այն խօսքերն, որովք կը յայտարա-
րէր թէ փոքր — Ասիա եւրոպական
կեանք պիտի առնու : Այս գեղեցիկ
դարադրութիւնը դեռ բաւական հեռի
կ'երևի, թէպէտ և Անդդիական հիւ-
պատակներն երկրին ամեն կողմերը
պտոյաներ կ'ընեն, և Պ. Թօրօթըր,
ըստկապալտ տեսարակին մէջ տպուած
տեղեկագրերուն, Գիւրգ ազաններն
ու պէթըրն ի ժողով հրաւիրելով ա-
մեն անասիկ յորդորներ տուեր է ա-
նոնց արդարութեամբ և մարդասիրու-
թեամբ վարուելու : Ցաւալի է որ
խրատներն ու բարոյական ազդեցու-
թիւնն այսչափ անզոր են :

ՎԻՃԱԿԱՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱԶԳԱՅԻՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Շիտակը խոստովանելու համար
պէտք է յայտնել թէ վերջերս Հայ-
աստանի վիճակագրութեան վրայ
վնդվիական պաշտօնատարաց և
թուրք լրագրաց ըրած հրատարա-
կութիւններուն սխալները ցուցնելու
համար քանի մը յօդուածներ հրա-
տարակած ժամանակ բնաւ չէինք
յուսար մեզ հակառակորդ ունենալ
Հայ խմբագրի մը : Մեր յօդուածնե-
րուն մէջ կային այնպիսի կարեւոր
կէտեր, որոց վրայ ախորժով պիտի
գրէինք ընդարձակօրէն : Եթէ ան-
կեղծ և օրինաւոր վիճաբանի մը հան-
դիպէինք, Գիւրգաբար ժամանա-
կիս ցաւալի նշաններէն մին ալ այս է
որ մեր մէջ իբրեւ խմբագիր իրենք
զիրենք հրապարակ նետած անձինք
ոմանք տակաւին խնդիր մը կամ զը-
րական դատ մ'օրինաւորապէս պաշտ-
պանել չուսած : Վիճաբանութիւն կը
վիճաբանէ պարզապէս իրենք իրենց
կարեւորութիւն տալու կամ այլոց յա-
ջողութեան յառաջ եկած նախնաձի-
մը գոհացում ընձեռելու համար :
Բնական է որ մեր այդպիսեաց հետ
այնքան միայն վիճիմք, որքան անմի-
ջական հարկ մը կրնայ ցուցնել յա-
րուցեալ խնդիրը :

Այս տողերը մեզ ներշնչուին է՝
Դաւթիա տպուած Հայ լրագրի մը,
որունարդէն պատասխան մը տուած
եմք, իւր երկուշարթի առեւ թուոյն
մէջ մեզ գէ-մ հրատարակած : Ինչ որ
յօդուածն է ըստ որում մեր վիճաբա-
նութեանց մէջ մասնաւոր զիջու-
թիւն մը կրնայ որ մեր ընթերցողաց
ձանձրոյթ չպատճառէ մը, և զերեմք
միայն այն մանրամասնութեանց վրայ,
յորոց ուղղակի իրենք ևս բաժին մը
կրնան հանել, կարծեմք տակաւին
չէ մոռցուած որ այդ լրագիրն աս-
կէ առաջ հրատարակած մէկ յօդուա-
ծին մէջ գանգատած էր թէ Մասիս
Հայաստանի վիճակագրութեան խնդ-
րով կ'ըլլար « օրն և անկարեւոր » զը-
րութիւններ հրատարակելով : Մեր
իրաւամբ պատասխանները թէ երբ
օտարազգիք այդ խնդրով կ'ըլլարին,
առաւելագոյն իրաւամբ Մասիս ալ
կրնայ գրել այդ նիւթին վրայ : Այս
կողմէն անյայտ ելնելէ ետեւ, մեր
հակառակորդն իւր երկրորդ յօդ-
ւածին մէջ կը յայտարարէ՝ առանց
սակայն ապացուցանելու՝ թէ Մասի-
սի յօդուածները կրնային « անտեղի
յոյսերով լցունել իւր ընթերցողներն,
որպէս թէ վիճակագրական հաշիւնե-
րն, եթէ ճշդիւ կատարուած լինէին,
Հայերն ստիպեալ քաղաքական մեծամեծ
արտօնութիւններ ձեռք պիտի կըր-
նային բերել : »

Այս առարկութիւնը՝ ճշմարտու-
թիւնը խնդրութեան յանցանքն ու-

նի, և արդարեւ Մասիս իւր յօդ-
ուածներուն և ոչ միայն մէկ կարծիք
յայտնած կամ յոյս տուած է որ եթէ
Հայաստանի վրայ օտարազգեաց կող-
մէ շինուած վիճակագրութիւնը ա-
ւելի ճշմարտանման լինէին, արմատա-
կան փոփոխութիւնք տեղի պիտի ունե-
նային իրաց արդի վիճակին մէջ : Ի-
րաւ է որ քաղաքական վերջին կազ-
մակերպութեանց մէջ թուոյ խնդիրը
մեծ դեր խաղացած է : Բայց Հայաս-
տանի զայլ, Մասիսի քաղաքական
յօդուածն և վերջերս հրատարակած
վիճակագրական տեղեկութեանց մէջ
յայտնուած զաղափարներն այնքան
գրական և այնքան մաքուր-մաքուր է-
լին, որ Մասիսի ընթերցողք չէին կըր-
նար տածել այդ յոյսը, զոր մեր հա-
կառակորդն անշուշտ իւր դատին
յաջողութեան համար օգտակար կը
համարի երեւակայել : Եւ արդարեւ
Մասիս իւր այդ գիտողութեանց մէջ՝
Սալմաթեաններուն խոշոր սխալները
պարզապէս հաշուական խորհրդա-
ծութեանց միջոցաւ երևան հանելէ,
և Հայաստանի վիճակագրութեան
հետ կապակցութիւն ունեցող քանի
մը պատմական անհերքելի իրողու-
թիւններ յիշելէ զատ ուրիշ բան չէ
ըրած : Ազգի Հայաստանի վիճակա-
գրութեան խնդրոյն մէջ ինչ ինչ ի-
րաւունքներ ունենալու գիւրգու-
թիւնն ունէր, որք անտես եղած է-
լին քանի մը պաշտօնական հրատարա-
կութեանց մէջ : Մասիս ներկայացած
առեւ օգուտ քաղելով այդ իրա-
ւունքներն իւր յօդուածն և մէկ ար-
ձանագրելէ զատ ուրիշ բան չէ ըրած :
ուստի մեր դատմիս հակառակորդը
միայն կրնայ կարծել թէ այդ ընթաց-
քով « անտեղի յոյսեր » տուած եմք
մեր ընթերցողաց :

Պահ մ'ենթադրեմք սակայն թէ
մեր ընթերցողք յիշեալ վիճակագրա-
կան յօդուածները կարգաւոր իւրօք
այնպէս կարծեն որ եթէ Հայաստանի
վիճակագրութեան և պատմութեան
վրայ եւրոպիոյ քաղաքագէտք աւելի
ճշգրտ և մանրամասն տեղեկութիւն
ունենային, հաւանականաբար ինչ
ինչ արտօնութիւններ կուտային այդ
երկրին : Սակայն՝ մեր հակառակոր-
դը կուզէ որ ազդու փոխանակ այդ-
պիսի կարծիք մ'ունենալու՝ համազ-
ւած լինի թէ միայն կը թուութեամբ
յառաջ պիտի երթայ, և կը փափա-
քի որ Մասիս ալ այդ քաղաքը տայ
ազգին, բայց Մասիս, որ չէ գաղ-
րած յայտարարելէ թէ Հայաստանի
ժողովուրդն իւր փրկութիւնն իւր
ձեռք միայն պիտի ստանայ, թէ օ-
տարէն յոյս չկայ, թէ ազգային կըր-
թութիւնն արդարեւ յառաջդիմու-
թեան առաջին միջոցն է, թէ մեծ
պէտք կայ զայն յառաջ առնելու,
Մասիս որ կրնայ պարծիլ թէ ազ-
գային լրագրաց մէջ առաջին տեղը

Յանյաւոր եկեղեցականաց զաւ
լ, ատնոյ համար, ինչպէս ամեն
սոյաքակիրթ ազգոյ մէջ սովորու

թիւն է, յատուկ կը դրանց մը կամ վանք մը պէտք է ունենալ մայրաքաղաքի մէջը կամ մօտը, և այնպիսիներն անդ արդէնլ կամ ապաշխարութեան ենթարկել:

Գոհութեամբ կը լսեմք որ Հիւանդանոցի ներկայ բարեջան հոգաբարձութիւնն արդէն այս կէտերն իւր ուշադրութեան տակաւ ըրած, և մանաւանդ Ս. Գրիգոր Հիւանդանոցի ներկայ քայքայուն և նորագոյնութեան անընդունակ վիճակը նկատելով, ծրարաբար մը պատրաստած է, որ թէ՛ Ողբին պիտոյնց և պատուոյն, և թէ՛ Ժամանակիս քաղաքակրթական պահանջմանց լիովին կը պատասխանէ:

Փախաքելի է որ այդ ծրարելը Ժամ առաջ հրատարակուելով, անյայտաբար գործադրութեան միջոցներուն վրայ հրաւիրուի աղգին ուշադրութիւնը:

Իւսկիւտար 28 նոյ. 1879

... Խմբագիր.

Ամենայն Հայոց միհասկառ կաթողիկոսին ընկերութիւնն օրհնութեան կոնգրէսի մի ընդունելու պատիւն ունենալով՝ կը յիշեմք անոր մի պատճենն առ Ձեր ինչպէս մի քանի այլ լրագրաց և կը խնդրեմք որ բարեհաճէք հրատարակել զայն Ձեր Պատ. թերթին միջոցաւ ի քաջալերութիւն համայն ընկերութեանց:

Մեծար. յարգանք

Ընդհ. Ժողովոյ

Առնեալ պիտի Առնեալ պիտի
Զապէլ Խանճեան Եւսեփ Եւսեփ

Գէորգ Ժառայ Գրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսական և Կաթողիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն պատրիարք համադրական նախամեծար Աթուոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Լիմառնի, բարեպաշտուհի անդամաց Աղգա. նուէր ընկերութեան Հայուհեաց որ ի կոտորածու պիտի պարկեշտաւուն և հարգաւոր դատեց Մայր Աթուոյ սրբոյ Լիմառնի, ողջոյն և Հայրապետական օրհնութիւն:

Ի դրութեան ընդհանուր Ժողովոյ պատուական ընկերութեան ընդ ստորագրութեամբ համատեալ փայլ Եղիսարեթի Սեղոսեան Առնեալ պիտի և Զապէլ Խանճեան Առնեալ պիտի տեղեկացաք աղգանուէր ջերմեանդութեան և նպատակի Ձերում՝ որ յօգուտ Աղգիս Խմբակաւ գուն գործէք Ձերովդ հոգատարութեամբ օժանդակել Հայկական-Աղգային լուսաւորութեան և յառաջագիւծութեան:

Գահանաւք զՏեառնէ, որ իւրով ամենաբաւական շնորհօք հաճեալ է և ի տիկին և յօրիորդսդ ներշնչել հոգի հանձարոյ և շարժել զսիրտ Ձեր ի գործդ այդ չքնաղ և արժանի գովութեան:

Մարդասիրին Աստուծոյ են սքանչելիք, զի դատեք մեր արդ. ձեռնարկեալ են քան զղարդ մարմնական արժանաւոր պէճիլ ի հոգի, որ ոչ զժամանակաւոր կերպարանէ զփառս, այլ որ յաւիտեան անմահ հանաւոց է յիշատակօք:

Նշան է այս եթէ եկեալ հասեալ իսկ է օր այցելութեան Տեառն, և տառապեալ որդիք Հայաստանի, որ ընդ լծով ստրկութեան տգիտութեան անկեալ հեշտանային խուտաւային կենօք, արդ. կենդանութիւն զգեցեալ ունին խայտալ և բարգաւաճել մտաց լուսաւորութեամբ, և յուսանել լուսաւորեալ աշխարհի զգոյթիւն իւրեանց, նշան է այս

մեծի այցելութեան Տեառն, զի զամենայն առհասարակ տեսանեմք տփակեալ և միտ չաղաւ զօրացեալ ի գործ փրկութեան:

Օրհնեալ է Աստուծոյ, որ ըստ իւրում անգիտելի անօրհնութեան զանախունելի հրաշագործ է և յեղաւարձում շրջէ զսիրտս և վախճանէ զյանկութիւնս իւրաքանչիւրոյս յանկարեւորութենէ ի կարեւոր և յօգուտական:

Վասն այսորիկ գովութիւնք իմ առ Ձեր յաճութեալ են, և ի է սիրտ իմ ինքնութեամբ, վախճանակ զի այդպէս իմաստնայեալ էք խորհիլ և գործել և վստահ եմ յուսով զի որ այդպէս արեւանայք, յաղթելոյ էք և ամենայն գիտարութեանց, զոր թնտմին բարեաց գիտէ ի միջի յաւուցանել մանաւանդ յայնպիսի գործս, որ Աստուծոյ հաճոյն է և ի վառ Աստուծոյ կարգեալ:

Զայս յայս միութեամբ աներկ-րայիս առնէ մեզ և հիմնական կանոնադրութիւն Ձեր, զոր ոչ նուազ լուրջ խորհրդածութեամբ խմբագրեալ էք իւրեկ հիմն եղեալ Ձերոց լարեւաշարական ձեռնարկութեանց:

Աստուծոյ միութեամբ եմք ի Տէր զի այդպիսի գործք բարիք և աղգօրհնք յատուր Հայրապետութեան մերոյ արժարին յամենայն ուրեք յԱղգի մերում:

Արդ ի խնդութեան մերում պատուիրեալք ձեռնառու Ձեր յարուցանելոյ միանգամայն զինքիւ Ձեր և զկանոնադրութիւն ընկերութեանը հանդերձ կոնգրէս մերով աղգադրել յԱրարատ ամառաբն, նաեւ յորդոր լինել ամենայն մերադնէից, առ ի մասնակցել աղգաշէն գործոց Ձերոց և բարի նպատակի:

Մարթեմք առ Աստուծոյ լըյուցանել զՁեր երկնային հանձարով Հոգւոյ Սրբոյ, զի կարող լինէք յամենայն, և տեսլիք զպտուղ բեր-տանց Ձերոց և վայելեալ ուրախութիւնք փառաւորեալ ի Տէր:

Ողջ լինեալք և օրհնեալք յԱստուծոյ և ի Սրբոց նորա և ի մէջ:

Դ.ՈՐԳ.Դ.

Կաթողիկոս ամենայն Հայոց

ի Սուրբ Լիմառնի

Թ. 5/8
Ի 23 Հոկտեմբերի 1879 ամի
Ըստ սուսմարիս ՌՅԻԹ

Թ.ՂԹԱԿՅՈՒԹԻՆԻՔ ՄԱՍԻՍԼԱՐԱՐՈՅ
Մէրին 16 նոյ. 1879

... Խմբագիր Տէր.

Կ. Պօլսոյ—Գարգանի—Զմիւռնիս

Մեր խոստման համեմատ կը փութամ գրել այն ամեն տեսանկերս և լսանկերս այս անգամի ձամբորդութեան միջոցին ևս:

Նոյ, ուր երբեք հինգ շաբթի օրը արեւ օրումն վերջին բարեւ կուտար երբ Աւստրիական Սաթիւնիս անուն չորհեալը Մամառայի կղերքն կը բաժնուէր: Օղջ սաստիկ ցուրտ էր և ուռեկներ մէջի ձուկերու շարուածքի տէս նաւուն վերնայարկը լցուած էին ձամբորդներ, ուրեք այլ և այլ տեղեր կերթային:

Գարգանի կղերաց արուածանները Նիկիոյ—Չանաղ—Գալէ, Լօֆօս—Կղզի և Միսիլի հանդիպելով Պօլսոյն մեկնելէս ճիշդ 40 Ժամ վերջը հասանք Զմիւռնիս, կամ լաւ ևս ըսելով Տաճկաստանի Փարիզ:

Նաւուն քամարային մէջ բռնաւոր արդեւ մը կար (որոյ պատճառն ալ յայտնի չէ) սիկար ծխելու համար, շատ փնտրանութիւններէ վերջ ձամբորդաց միտարանութեամբ ծխելով և յեղա-փոխական կերպիւ զինադրելով՝ ոչ միայն պատուութիւն եղաւ ծխելու, այլ այնուհետեւ տեւել պատուաւոր եղան ձամբորդները...

Նաւուն մէջ կար նաեւ ի մէջ այլոց Գերմանացի մը, որ Գամառկոսի կողմերէն Հայաստան պիտի երթար. իւր ձեռքը կը ցուցնէին որ սրտածակաւ մարդ մի է և քաղաքական նորաստի ունի այս ձամբորդութիւնը:

Զմիւռնիս, այն գեղեցիկ քաղաքը, ինչպէս յայտնի է՝ Քրիստոսէն 1000 տարի յառաջ շինուած է Յոնիական ուրիշ քաղաքաց հետ Միջերկրականի կղերքը վայելուչ դիրքի մը վրայ: Նոր աւազան մը շինուած է, որոյ տարածութիւնը կարծեք 100000 քառակուսի կանգունի կը հասնի, իսկ Քարափը որ Ֆառնսերէն Քէ կը կոչուի, մէկ մղոնէն աւելի երկայնութեամբ և 150—250 կանգուն լայնութեամբ ծովը լցուելով շինուած նշանաւոր գործ մ'է, որոյ վրայ այլ և այլ գեղեցիկ տուներ, պանդոկներ, մթերանոցներ եւ շինուելէն վերջ, 50 կանգուն լայնութեամբ և տափարակ քարերով ձամբայ մը կայ, ուր քաղելու համար մարդ հաճոյք մը կը գտայ:

Սոյն Քարափին վրայ կը բռնին նաեւ կանոնաւոր Թրամպոյի կառքերն, որոնք Պօլսոյ կառքերէն թէ՛ լաւ, թէ՛ ամեն թէ՛ կանոնաւոր են. ամեն օր բազմաթիւ չորհեալք կուգան ու կերթան թէ՛ յերթոյս, թէ՛ ի Տաճկաստան և թէ՛ յԱղգալոս:

Երկրթուղին արդէն ծանօթ է:

Բռնուկ և վաճառաւոր քաղաք մը, որ իր աստիճանով Պօլսոյ անդամ կրնայ դերադանցել. նշանաւոր շէնքերն են Քրիստոսիկ եկեղեցիքը, հիւանդանոցները, վարժարանները, արքունի շէնքերն և մասնաւորաց տուներ և պանդոկներ, ինչպէս նաեւ Սպարթալեանց շէնքերը:

Բնակիչք միջին հաշւօք հետեւեալ թիւը կը կազմեն.

15000 տուն Յոյն, 12000 Մահմետական, 4000 Եւրոպացի, 4000 Հրէայ, 1200 Հայ, 300 այլ և այլ. գումարն է 57 հազար տուն կամ ուրիշ հաշւօք 200,000 անձ (նուֆուս):

Հայերը սակաւաթիւ ըլլալով հանդերձ կարեւոր դիրք մը բռնած են, զբւաւոր վաճառականութիւնը Հայերուն ձեռքն է, Սպարթալեանի ստորագրութեան Եւրոպոյի զլուստը քաղաքներն անհուն վարկ մ'ունին, յորմէ վերջը կուգայ Եւրոպանը, կան նաեւ ուրիշներ ալ:

Հայոց մէջ կայ նաեւ առաջին զրագէտներ, ինչպէս Մամառեան և Զիլին կերեան. Մամառեանը և Մարիկ կարգադրեալք կ'անհնչան նոցա արժէքը, և մեք ալ անձամբ հետեւեալն տեսնուելու պատիւն ունեցանք:

Հայերը առ հասարակ Յունարկը Հայերէնի տէս խօսելէն վերջ՝ մեծ մասամբ Ֆառնսերէն և Անգղիերէն, իտալերէն և Գերմաներէն ալ կը խօսին ու կը գրեն: Կառավարութեան մէջ կարեւորութիւնը Հայոց արուած է միշտ: Ունին նաեւ այլ ուսումնականներ, փաստաբաններ և այլն:

Հայերն ունին հոյակապ և պայծառ մի եկեղեցի, որուն նմանը Պօլսոյ և այլ տեղեր տեսած չեմ. նոյնպէս նորաշէն հիւանդանոցն, որ նոյն իսկ Զմիւռնիոյ մէջ ալ եղաւ է: Յայտնի է որ այս հիւանդանոցն Սպարթալեան աղգաւոր և բարեկարծ գերդատանիին շնորհն է: 15000 օսմ. իրայ ծախս ընելով իրենց կողմէն՝ ամենայն վայելութեամբ լրա-ցուցած և աղգին յանձնած են՝ իրենց բարեբարութիւնն ալ միշտ շարունակելով:

Հայերն ունին Մերովպեան և Հոլի-սիմեան վարժարաններն, որոց մէջ իւր 600 ուսանողք կան: Աւանդեալ ուսմանքն են Հայերէն իր պարագաներով, Ֆառնսերէն, Անգղիերէն և Տաճկերէն, երբեմն և Յունարկն:

Շատ մը դասատուներէ և 4 վարժուհիք գտաւ կայ նաեւ Գաղղիացի դասատու մը. դասատու է նաեւ Պ. Մամառեան, որոյ վրայ ինչ կերպ զովեոտ գրելէս չեմ գիտեր. մէկ խօսքով՝ դասատու հազուադէպ դրաղէտն է:

Գարգանիներն շէնքերը թէ և անշուք են (եկեղեցիքն և հիւանդանոցն հետ բաղդատելով), բայց աղէկանց վարժարանը նորագիւ խոստացած է Սպարթալե-

եան աղգաւոր Յովհաննէս Էփէնտին: որ այժմ Մանչէսթըր է: Ես զայս լսեցի վրեժ. Մ. Յակոբ Էփէնտին, որ այս աղին գերդատանին նահապետն է:

Վարժարանաց համար աղին ասկից յառաջ 90000 դրուչ կը վճարէ եղեր. Գեր. Մարատեանի շնորհիւ այս գումարը բարձրացեր է մինչև 175000 դրուչ: Իսկ հիւանդանոցի տեսչութեան յանձնաւոր. 18 ամիսներ շարունակելէն վերջ, երբ Գեր. Մարատեան բացակայ կը գտնուի, չեմք գիտեր ինչ պատճառաւ անհամաձայնութիւն կը ծագի Ընդհ. Ժողովոյ և Իսկ հիւանդանոցի միջև: Իսկ հիւանդան կը պահանջէ Կարապետ 215,000 դրուչ, իսկ Ժողովը կուգէ 120,000 ի իջեցնել. հետեւորդը Բառնի. խորհուրդը և Իսկ հիւանդան կը հրաժարին, և Ժողովը 105,000 դրուչ կորոչէ Պիտաճին մէջ վարժարանաց համար: Այլ ցաւի Գեր. Մարատեան և Ընդ Նաին շատերը, բայց եղածն եղեր է. իսկ ներկայ Քաղ. Ժողովը տեսնելով որ կարելի չէ, 150,000 դրուչ ծախք կորոչէ գործընդունել փնտիչ շնուատանցներու համար:

Ահաւորիկ Զմիւռնիոյ վարժարանաց ներկայ պատմութիւնն, զոր ուղղելով գրած եմ՝ առանց մէկ կամ միւս որոշմանց թեր ուղիւ խօսելու:

Վարժարանները բաւական յառաջ գիւծութեան մէջ և բարեկարգ են. միայն մասնաւոր մէկ երկու թերութիւնք տեսնելով երբ գիտարութիւն ըրի նորընտրի Ուսումն. խորհրդոյ և առ որ անի է, տեսայ որ մեզմէ յառաջ դասեր են, և առնանց լրութեամբ համար ալ տը եղած միջոցներն ալ կը խորհին և գործադրեալն ալ անտարակոյս եմ:

Մանչէսթըր յուլիս 1879

ՆՈՐ ԴՊՐՈՅ

Պարտեաց և Երեւանացի համար

Այս գաղտնի մէջ բաւական ընդարձակ կերպով ուսմանը պիտի աւանդուի երկաստարդաց, որք կը փափաքին գտատու կամ վաճառական ըլլալ:

Դպրոցին վրայ մասնաւոր տեղեկութիւն առնել ուղղորդել կրնան գիւծ մը առ հոգաբարձուս յիշեալ գրգրոցին, այսինքն առ Պատ. Սիմէն Խ. Զ. Խ թիւճեան, Պատ. Աւետիս Կ. Բ. Ասատուրեան, Պատ. Տօք. Վուս և Պատ. Պարօղ, և կամ առ անօրէն գաղտնի Պատ. Հիւրդօք:

Դպրոցին տեղն է Ֆինանսըլար եօգուշու, Խպրահիմ փաշա ճամի փաղոյ, թիւ 1 տունը, Ամերիկացւոյ գրատան ետին:

Դպրոցը պիտի բացուի 10/22 դեկ. 1879:

Ա. Զ. Դ.

Հայերէնի, Աղգ. Պատմութեան, Թուարանութեան և Աշխարհագրութեան տեղեկ երկաստարդ մը պատրաստ է տանց և աղգային վարժարանաց մէջ այցելութեամբ դասախօսել: Պէտք ունեցողը լրագրոյս գրասենեակը կը հրաւիրուի:

Բ. Զ. Դ.

Անգղիացի Հայ երկաստարդ մը կը փափաքի Աղգ. վարժարանաց տանց մէջ դասախօսել: Ուղղող լրագրոյս գրատանեակը կը հրաւիրուի:

3

ԾԱՆՈԹՅՈՒՄ

Ս. Երուսաղէմոյ վաղըֆէն Խուկիւտար վանքին այգին Գաղղիստան ճատտէսի 11 թիւ միայն մեծ տունը որ 330 կանգուն տեղ է, վաղըֆի կողմանէ ծախու է. ուստի ա՛յ որ կուգէ՝ մինչև յառաջիկայ հինգ շաբթի օր պէտք է յերուսաղէմոյ տուն գալ:

22 նոյ 1879

9—40

